

4.3. Զբոսաշրջություն

4.3.1. Միջազգային զբոսաշրջություն

Միջազգային զբոսաշրջության որոշ ցուցանիշներ 2018-2019թթ. հունվար-սեպտեմբերին

մարդ

	2018թ. հունվար- սեպտեմբեր	2019թ. հունվար- սեպտեմբեր	2019թ. հունվար-սեպտեմբերը 2018թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ
Ժամանողներ¹			
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ ²	1 275 209	1 459 152	114.4
որոնցից տեղավորվել են՝			
հյուրանոցային տնտեսության օբյեկտներում	246 300	415 799	168.8
բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն	1 028 909	1 043 353	101.4
Մեկնողներ¹			
Մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ ²	1 148 541	1 312 282	114.3
որոնցից ուղևորությունը կազմակերպվել է			
զբոսաշրջային գործակալությունների կողմից	3 120	7 685	2.5 անգ.
ինքնուրույն	1 145 421	1 304 597	113.9

¹Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք է հանդիսացել սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված ՀՀ ազգային անվտանգության ծառայության (ՀՀ ԱԱԾ) ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով, ինչպես նաև 2013թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի, Հայաստանում դոնոր կազմակերպությունների՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (USAID EDMC) ծրագրի համագործակցությամբ իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքները:

²Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **միջազգային զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը հանգստանալու, բուժվելու, հարազատների այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեին ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ու աճի տեմպը 2018-2019թթ. հունվար-սեպտեմբերին¹

	Տեսակարար կշիռը,%		Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի տեմպը, %
	2018թ. հունվար-սեպտեմբեր	2019թ. հունվար-սեպտեմբեր	
Ընդամենը	100.0	100.0	168.8
այդ թվում՝			
ԱՊՀ երկրներ	23.5	24.4	175.9
որից՝			
Ուկրաինա	1.9	1.4	131.7
Ռուսաստանի Դաշնություն	20.2	21.1	176.2
ԱՊՀ այլ երկրներ	1.4	1.9	2.3 անգ.
ԵՄ երկրներ	27.3	27.9	172.2
որից՝			
Նիդերլանդներ	0.9	1.0	198.6
Իտալիա	3.1	3.0	162.8
Ֆրանսիա	5.0	6.7	2.3 անգ.
Գերմանիա	6.8	8.7	2.2 անգ.
Միացյալ Թագավորություն	3.2	0.7	35.9
ԵՄ այլ երկրներ	8.3	7.8	156.1
Այլ երկրներ	49.2	47.7	163.6
ԱՄՆ	14.3	6.6	77.9
Իրանի Իսլամական Հանրապետություն	7.2	4.8	113.3
Վրաստան	2.3	1.5	111.7
Թուրքիա	1.1	0.2	30.5
Կանադա	1.7	1.5	143.8
այլ երկրներ	22.6	33.1	2.5 անգ.

Զբոսաշրջության ցուցանիշների կառուցվածքն ու աճի տեմպը ըստ այցելության նպատակի

մարդ

	Տեսակարար կշիռը,%		Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի տեմպը, %
	2018թ. հունվար-սեպտեմբեր	2019թ. հունվար-սեպտեմբեր	
Ժամանողներ¹			
Ընդամենը զբոսաշրջիկներ	100.0	100.0	168.8
որոնցից ըստ նպատակի			
գործնական	26.7	16.4	103.5
հանգստի և ժամանցի	50.2	52.3	175.7
կրթության	0.0	0.0	11.8 անգ.
բուժման	1.5	0.5	55.4
այլ	21.6	30.8	2.4 անգ.
Մեկնողներ²			
Ընդամենը զբոսաշրջիկներ	100.0	100.0	2.5 անգ.
որոնցից ըստ նպատակի			
գործնական	1.3	16.6	31.1 անգ.
հանգստի և ժամանցի	98.7	83.2	2.1 անգ.
կրթության	-	-	-
բուժման	-	-	-
այլ	-	0.2	-

¹ Բերված տվյալներն արտացոլում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին:

² Տվյալներն արտացոլում են միայն զբոսաշրջային գործակալությունների կողմից կազմակերպված զբոսաշրջիկների թվաքանակը: